ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«_02_» հունիսի 2020 թվականի № _144_

ԱԻԴԱ ՕՀԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի և 111-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1.Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով 2020 թվականի հունիսի 3-ին լուծել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմում աշխատանքային փորձ ձեռք բերող մասնագետ Աիդա Օհանյանի հետ 2020 թվականի մարտի 2-ին կնքված աշխատանքային պայմանագիրը: Վերջին աշխատանքային օր համարել 2020 թվականի հունիսի 2-ը:

2.Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ և վճարել:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի _2_
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» հունիսի 2020թ. № 145

ՌԱԶՄԻԿ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՔՆԱԿԱՄ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9}-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի կողմից 2020 թվականի մայիսի 27-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը Ռազմիկ Ասատուրի Նազարյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի գործառնական նշանակությունն ինքնակամ փոփոխելու մասին՝ **որոշում եմ.**

1. Ռազմիկ Ասատուրի Նազարյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի գործառնական նշանակությունն ինքնակամ փոփոխելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2020 թվականի հունիսի 9-ին, ժամը 11:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Ռազմիկ Ասատուրի Նազարյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.հունիսի 4
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» հունիսի 2020թ. № 146

ԳԱՐԻԿ ՅՈՒՐԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ԱՐՓԻՆԵ ՅՈՒՐԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԵՎ ՀԱՄԵՍՏ ԱՐՄԵՆԱԿԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՔՆԱԿԱՄ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244[9]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի կողմից 2020 թվականի մայիսի 27-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը Գարիկ Յուրիկի Ղազարյանի, Արփինե Յուրիկի Ղազարյանի և Համեստ Արմենակի Նիկողոսյանի կողմից իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասի գործառնական նշանակությունն ինքնակամ փոփոխելու մասին՝ **որոշում եմ.**

1. Գարիկ Յուրիկի Ղազարյանի, Արփինե Յուրիկի Ղազարյանի և Համեստ Արմենակի Նիկողոսյանի կողմից իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասի գործառնական նշանակությունն ինքնակամ փոփոխելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2020 թվականի հունիսի 9-ին, ժամը 12:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Գարիկ Յուրիկի Ղազարյանին, Արփինե Յուրիկի Ղազարյանին և Համեստ Արմենակի Նիկողոսյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.հունիսի 4
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» հունիսի 2020թ. № 147

ԱՇՈՏ ՀՐԱՉԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի կողմից 2020 թվականի մայիսի 27-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն Աշոտ Հրաչիկի Սիմոնյանի կողմից Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին՝ **որոշում եմ.**

1. Աշոտ Հրաչիկի Սիմոնյանի կողմից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2020 թվականի հունիսի 9-ին, ժամը 10:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 4
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2020թ. № 148

ՌՈԲԵՐՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ, ՍԱԹԵՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետով, 53-րդ կետի «բ» ենթակետով և 55-րդ կետով, սակայն անշարժ գույքին հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1155139 վկայականը և Ռոբերտ Գագիկի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ռոբերտ Գագիկի Սահակյանին, Սաթենիկ Վաչագանի Թորոսյանին և Կարեն Ռոբերտի Սահակյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Տաշիր թաղամասում գտնվող 06006 126-105 կադաստրային ծածկագրով 0,04 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի և դրա վրա գտնվող 51,5 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան «քաղաք Սպիտակ, Տաշիր թաղամաս, թիվ 48բ» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Տաշիր թաղամաս, թիվ 48/2» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2020թ. № 149

ՆՈՐԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերգինա Լևոնի Նազլոյանի մահից հետո Սպիտակ համայնքի Այգեստան փողոցի վրա գտնվող անշարժ գույքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2020 թվականի հունվարի 10-ի վկայագրի փոխանցվել է Նորիկ Վլադիմիրի Առաքելյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Նորիկ Վլադիմիրի Առաքելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

3. Նորիկ Վլադիմիրի Առաքելյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Այգեստան փողոցի վրա գտնվող 0,061 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Այգեստան փողոց, թիվ 283» հասցեն:

4. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2020թ. № 150

ԱՐՍԵՆ ԴԱՆԻԵԼԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ՝ ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Արսեն Դանիելի Դանիելյանի 2020 թվականի հունիսի 1-ի «Սպիտակի քաղաքապետի կողմից թվականին ցուցաբերած անգործությունը և գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և Արսեն Դանիելյանին ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի աղետի հետևանքով բնակարան կորցրած անօթևան և բնակարանի կարիքավոր ընտանիքների արտահերթ բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում ընդգրկելու մասին» վարչական բողոքի՝ 2020 թվականի հունիսի 5-ին կայացած քննարկման արդյունքում լրացուցիչ ապացույցներ ձեռք բերելու և հետազոտելու անհրաժեշտություն առաջացավ՝ ***որոշում եմ.***

1. Արսեն Դանիելի Դանիելյանի վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2020թ. № 157

ԱՇՈՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2649651 վկայականը և Աշոտ Հրաչիկի Սիմոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0504-0002 կադաստրային ծածկագրով 0,01 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 06-006-0504-0002-001 կադաստրային ծածկագրով 85,6 քառակուսի մետր մակերեսով հրուշակեղենի արտադրամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 246» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 05
ք.Սպիտակ